ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ



ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆ
(1840–1911)

Ղ. Աղայանը ծնվել է Վրաստանի Բոլնիս-Խաչեն գյուղում: Նա հայ իրականության մեջ հայտնի է որպես գրող, մանկավարժ և հրապարակախոս:

Առանձնակի կարևորություն ունի նրա «Ուսումն մայրենի լեզվի» քառամաս դասագիրքը, որի Ա մասը շուրջ 40 տարի (1875–1916) եղել է ամենատարածված այբբենարանը հայկական դպրոցներում:

Գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, վեպեր, մշակել է հեքիաթներ, ժողովրդական բանահյուսական նմուշներ, կատարել թարգմանություններ:

«Տորք Անգեղը» նրա լավագույն մշակումներից է:

Աղայանը մահացել է 1911 թ. և թաղվել է Թբիլիսի հայկական գերեզմանատանը: